

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 1998 թվականի N 864  
քաղ. Երևան

#### ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել բնօգտագործման վճարի դրույքաչափերը (կցվում են):

2. Սահմանել, որ`

ա) (Ենթակետն ուժը կորցրել է 29.12.11 N 1928-Ն)

բ) (Ենթակետն ուժը կորցրել է 18.06.01 N 543)

գ) (Ենթակետն ուժը կորցրել է 18.06.01 N 543)

դ) գունագեղ քարերի մարված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված կարգով՝ բացառությամբ օնիքսանման մարմարի, վանակատի (օբսիդիան) ու լիստվենիտի, որոնց մարված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով.

ե) համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացվող մրցույթների` շահագործման հանձնվող հանքավայրերի համար կարող են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվել սույն որոշմամբ սահմանված դրույքաչափերից տարբերվող դրույքաչափեր.

զ) ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է` ելնելով հաշվետու ժամանակաշրջանում հորատանցքից (աղբյուրից) արդյունահանված ջրի ծավալից և սույն որոշմամբ հաստատված դրույքաչափերից: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.2-րդ հոդվածով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներից սկսած, ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է` ելնելով հաշվետու ժամանակաշրջանում ջրօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղադրված հաշվիչ (չափիչ) սարքերով հաշվառված ջրի ծավալներից և սույն որոշմամբ հաստատված դրույքաչափերից:

Աղի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է` ելնելով հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված աղի ծավալից և սույն որոշմամբ հաստատված դրույքաչափերից.

է) հանքային ջրի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է` հիմք ընդունելով`

1) միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս`

ջրօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղադրված ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքով (առաջնային ջրահաշվիչով) հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով շահագործման տվյալ նպատակի համար հաստատված դրույքաչափը.

2) միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս` ջրօգտագործողների կողմից` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղադրված յուրաքանչյուր ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքով (առանձնացված ջրահաշվիչով) հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված ջրի ծավալը և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով

նախատեսված համապատասխան դրույթաչափը՝ որպես շահագործման առանձին նպատակների համար հաշվարկված բնօգտագործման վճարների հանրագումար.

ը) ածխաթթու գազ ստանալու նպատակով (այդ թվում՝ սույն կետի «է» ենթակետում նշված դեպքերում) գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում ջրօգտագործողի կողմից արտադրված ածխաթթու գազի համար վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում գազանջատիչից դուրս

եկող գազի խողովակի վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղադրված գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալը և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «գ» ենթակետով սահմանված համապատասխան դրույթաչափը:

թ) վճար վճարողների կողմից ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի ու ածխաթթու գազի համար բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով հաշվառումը վարելու ժամանակահատվածի համար բնօգտագործման վճարները (այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով) հաշվարկվում են՝ հիմք ընդունելով՝

1) ստորերկրյա քաղցրահամ ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման) ծավալները և սույն որոշմամբ հաստատված դրույթաչափերը,

2) միայն մեկ նպատակով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ արդյունահանված (այդ թվում՝ բնապահպանական մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ջրի ծավալը և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով շահագործման տվյալ նպատակի համար նախատեսված դրույթաչափը,

3) մեկից ավելի նպատակներով հանքային ջրի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ առաջնային ջրահաշվիչով հաշվառված, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) արդյունահանված (այդ թվում՝ բնապահպանական մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ջրի ծավալը և հանքային ջրի տվյալ հորատանցքի (աղբյուրի) փաստացի շահագործման նպատակների համար՝ սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով սահմանված ամենաբարձր դրույթաչափը,

4) ածխաթթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում տվյալ հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված հանքային ջրի (այդ թվում՝ բնապահպանական մարմնի կողմից հաշվարկված և արձանագրված) ծավալը և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով ածխաթթու գազ ստանալու նպատակով հանքային ջրի արդյունահանման համար սահմանված դրույթաչափը:

**(2-րդ կետը խմբ., փոփ., լրաց. 18.06.01 N 543, լրաց. 03.07.03 N 826-Ն, փոփ., լրաց. 03.02.05 N 149-Ն, լրաց. 31.03.05 N 445-Ն, 25.01.07 N 225-Ն, խմբ., լրաց. 22.01.09 N 123-Ն, փոփ., խմբ. 29.12.11 N 1928-Ն)**

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝ երկամսյա ժամկետում բնական պաշարների արդյունավետ օգտագործման համար Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն բնօգտագործման վճարի գանձման օբյեկտի տարր հանդիսացող փաստացի ծավալների նկատմամբ չափաքանակներ և սահմանափակումներ սահմանելու վերաբերյալ:

4. Լիազորել Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և քարերի պետական գանձարանին հրապարակելու սև, ազնիվ, գունավոր, հազվագյուտ մետաղների և գունագեղ քարերի միջազգային շուկայական միջին գինը եռամսյակի վերջին ամսվա դրությամբ, մինչև եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 10-րդ օրը:

**(4-րդ կետը լրաց. 25.01.07 N 225-Ն)**

5. Ուժը կորցրած ձանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 25-ի «Բնական ռեսուրսների օգտագործման, շրջակա միջավայր վնասակար նյութերի արտանետման համար վճարաչափեր սահմանելու և վճարումների կարգը հաստատելու մասին» N 221

որոշման NN 1 և 2 հավելվածները, որոշմամբ հաստատված կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 14-րդ և 16-րդ կետերը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու պահից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Դարբինյան**

Հաստատված է  
ՀՀ կառավարության 1998 թվականի  
դեկտեմբերի 30-ի N 864 որոշմամբ

**Դ Ր ՈՒ Յ Ք Ա Չ Ա Փ Ե Ր  
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ**

**I. Զրօգտագործման համար վճարի դրույքաչափերը**

1. Մակերևութային (բացառությամբ Սևանա լճից) ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար`

ծկնաբուծության նպատակով	1 դրամ
արդյունաբերական նպատակներով	0,5 դրամ,
խմելու և կենցաղային նպատակներով բացառությամբ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների,	0,5 դրամ,
որոնց համար`	0,025 դրամ
ոռոգման նպատակով	0,0 դրամ:

**(1-ին կետը խմբ. 29.08.01 N 789, 31.07.03 N 958-Ն, փոփ. 13.12.07 N 1533-Ն)**

2. Սևանա լճից ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար

ոռոգման նպատակով	0,2 դրամ
այլ նպատակներով	1,5 դրամ:

3. Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար` 1.0 դրամ, բացառությամբ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար` 0.05 դրամ:

**(3-րդ կետը փոփ. 18.06.01 N 543, խմբ. 29.08.01 N 789, փոփ. 13.12.07 N 1533-Ն)**

4. Խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար`

ոռոգման նպատակով	0,0 դրամ
այլ նպատակներով	1,0 դրամ:

**(4-րդ կետը փոփ. 18.06.01 N 543)**

5. Ռելիեֆային (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով ստորերկրյա թերմալ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար` 50 դրամ:

**(5-րդ կետը լրաց. 03.02.05 N 149-Ն)**

II. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար վճարի դրույթաչափերը  
(Վերնագիրը փոփ. 31.03.05 N 445-Ն)

1. (1-ին կետն ուժը կորցրել է 29.12.11 N 1928-Ն)
2. (2-րդ կետն ուժը կորցրել է 29.12.11 N 1928-Ն)
3. Վառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար՝

ածուխ	5 տոկոս
տորֆ	3 տոկոս
այրվող թերթաքարեր	3 տոկոս

**(3-րդ կետը փոփ. 18.06.01 N 543)**

4. Երեսապատման քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

տուֆ	5 տոկոս
ֆելզիտային տուֆ (այդ թվում՝ դեկորատիվ)	6 տոկոս
գրանիտ (գրանոդիորիտ, գրանոսիենիտ)	7 տոկոս
մարմար, մարմարացված կրաքարեր	5 տոկոս
դեկորատիվ մարմար	6 տոկոս
կոնգլոմերատներ և կոնգլոբրեկչիաներ	7 տոկոս
տրավերտին	6 տոկոս
բազալտ	4,5 տոկոս
հիալոբազալտ	6 տոկոս

**(4-րդ կետը փոփ. 18.06.01 N 543)**

5. Շինարարական քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

տուֆ	4 տոկոս
տուֆաավազաքարեր	3,5 տոկոս
բազալտ	3,5 տոկոս
անդեզիտ, անդեզիտաբազալտ և այլն	3,5 տոկոս
պրոֆիրիտ	3 տոկոս
կրաքար	3,5 տոկոս

**(5-րդ կետը փոփ. 18.06.01 N 543)**

6. Լցանյութերի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

հրաբխային խարամ	3 տոկոս
պենզա	4 տոկոս
ավազախճաքարային խառնուրդ	3 տոկոս

(ավագ, խիճ և այլն)	
բալաստային հումք (պորֆիրիտ, բազալտ, անդեզիտաբազալտ, լիպարիտ և այլն)	3 տոկոս

**(6-րդ կետը փոփ. 18.06.01 N 543)**

7. Շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`

ցեմենտի հումք (կավեր, կրաքարեր, մագնեզիումսիլիկատային ապարներ)	6 տոկոս
կրաքար (կիր ստանալու համար)	3 տոկոս
կավեր	4 տոկոս
բնական հանքային ներկեր	4 տոկոս
գիպսատար կավեր	4 տոկոս

**(7-րդ կետը փոփ. 18.06.01 N 543, լրաց. 29.12.11 N 1928-Ն)**

8. Գունագեղ քարերի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար`

ազաթ	6 տոկոս
փիրուզ	6 տոկոս
վանակատ (ծիածանվող օբսիդիան)	6 տոկոս
հասպիս	6 տոկոս
օնիքսանման մարմար	5 տոկոս
լիստվենիտ	5 տոկոս
վանակատ (օբսիդիան)	7 տոկոս

**(8-րդ կետը փոփ. 18.06.01 N 543, լրաց. 03.02.05 N 149-Ն)**

9. Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար`

ցեոլիտ (խոր.մ)	5 տոկոս
պեռլիտ (խոր.մ)	6 տոկոս
դիատոմիտ (խոր.մ)	6 տոկոս
բենտոնիտ (տոննա)	6 տոկոս
դունիտ և պերիդոտիտ, մագնեզիումսիլիկատային ապարներ (տոննա)	4 տոկոս
հրակայուն կավեր (տոննա)	4 տոկոս
անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն հումք) (տոննա)	4 տոկոս

**(Տողը հանվ. 18.06.01 N 543)**

ծծումք	3 տոկոս
կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս) (տոննա)	3 տոկոս
դոլոմիտ (տոննա)	3,5 տոկոս
բարիտ (տոննա)	5 տոկոս

(Տողը հանվ. 18.06.01 N 543)

(9-րդ կետը փոփ. 18.06.01 N 543, լրաց. 29.12.11 N 1928-Ն)

10. Աղի և հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար՝  
ա) աղի յուրաքանչյուր տոննայի արդյունահանման համար՝

քարաղի տեսքով՝ 440 դրամ  
աղաջրի տեսքով՝ 45 դրամ.

բ) հանքային ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար՝

արդյունաբերական նպատակով՝ 3750 դրամ  
բուժական նպատակով՝ 200 դրամ  
ածխաթթու գազ ստանալու նպատակով՝ 150 դրամ  
ռեկրեացիոն (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով՝ 50 դրամ.

գ) արտադրված ածխաթթու գազի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

«Ջերմուկ» հանքավայր՝ 40 դրամ  
«Արզնի» հանքավայր՝ 45 դրամ  
«Հանքավան» հանքավայր՝ 40 դրամ  
«Բջնի» հանքավայր՝ 35 դրամ  
«Լիճք» հանքավայր՝ 30 դրամ  
«Սոլակ» հանքավայր՝ 30 դրամ  
«Քարաշամբ» հանքավայր՝ 40 դրամ  
«Արզական» հանքավայր՝ 75 դրամ  
«Սայաթ-Նովա» հանքավայր՝ 75 դրամ  
այլ հանքավայրեր՝ 30 դրամ».

(10-րդ կետը խմբ. 18.06.01 N 543, լրաց. 03.02.05 N 149-Ն, խմբ. 19.01.06 N 46-Ն)

11. (11-րդ կետն ուժը կորցրել է 29.12.11 N 1928-Ն)

### III. Կենսապաշարների օգտագործման համար վճարի դրույքաչափերը

1. Փայտանյութի (անտառանյութի) օգտագործման համար ծառի տեսակի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար՝

Անտառային ծառատեսակները	Հեռավորությունը (կմ)	Դրույքաչափը (դրամ)				
		շինափայտ առանց կեղևի՝ ըստ ծառաբնի կտրվածքի (սմ)			տեխնոլոգիական փայտ (1 մետր երկարությամբ՝ կեղևով)	վառելափայտ (1 մետր երկարությամբ՝ կեղևով)
		25-ից ավելի	13-25-ը ներառյալ	3-13-ը ներառյալ		
1	2	3	4	5	6	7
Կաղնի, հացենի, թխկի, թելի	մինչև 10-ը ներառյալ	5700	5250	4380	2600	700
	10-25-ը ներառյալ	4390	4040	3370	2040	630
	25-40-ը	3990	3670	3070	1670	560

	ներառյալ					
	40-ից ավելի	3420	3150	2630	1300	420
Սոճենի, լորենի	մինչև 10-ը ներառյալ	3300	3000	2540	1200	700
	10-25-ը ներառյալ	2540	2310	1950	1060	630
	25-40-ը ներառյալ	2310	2100	1780	930	560
	40-ից ավելի	1980	1800	1520	800	420
Հաճարենի	մինչև 10-ը ներառյալ	3000	2700	2310	1500	700
	10-25-ը ներառյալ	2310	2080	1780	1155	630
	25-40-ը ներառյալ	2100	1890	1620	1050	560
	40-ից ավելի	1800	1620	1390	900	420
Բոխի և այլ ծառատեսակներ	մինչև 10-ը ներառյալ	1250	1100	960	500	420
	10-25-ը ներառյալ	960	850	740	360	350
	25-40-ը ներառյալ	870	770	680	280	280
	40-ից ավելի	750	660	580	250	210

Սույն կետում կիրառվող՝ ստորև նշված հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով՝ **ցցաչոր ծառ**՝ բնական ծերացման, անտառաձման պայմանների խիստ վատթարացման, տարերային աղետների (հրդեհ), հիվանդությունների, վնասատուներով խիստ վարակվածության և այլ պատճառներով չորացած կանգուն ծառ:

**փայտանյութի օգտագործում**՝ կանգուն ծառի և (կամ) ծառի առանձին ճյուղերի հատում, կոճղերի հանում և անտառից դուրսբերում, թափուկի հավաքում և անտառից դուրսբերում:

**հեռավորություն**՝ անտառի սկզբից (որտեղից անտառային ճանապարհով դուրս է բերվելու փայտանյութը) մինչև ծառահատման վայրն ընկած տարածություն:

**(1-ին կետը խմբ. 19.01.06 N 46-Ն)**

2. Արդյունագործական նպատակով բույսերի յուրաքանչյուր միավորի օգտագործման համար՝

ա) **լայն կիրառում ունեցող դեղաբույսերի** (անթառամ՝ ծալքավոր, կատվախոտ՝ դեղատու, զիվան՝ հսկայական, լերդախոտ՝ ալեիեր, սրոհունդ (արևքուրիկ)՝ խոցված, լոշտակ՝ սպիտակ, լոշտակ՝ երկտուն, առյուծագի՝ սովորական, խնկածաղիկ՝ սովորական, տատրակ՝ սովորական (խոճկորիկ), օշինդր՝ դառը, կտտկենի՝ սև, արոսենի՝ սովորական, հազարատերևուկ՝ սովորական, եղերդակ՝ սովորական, եզան լեզու՝ մեծ, ուրց՝ Կոչիի, լորենի՝ սրտածև, կծոխուր՝ սովորական, ալոճ (սզնի) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 100 դրամ  
արմատներ՝ 300 դրամ:

բ) **այլ դեղաբույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 50 դրամ  
արմատներ՝ 200 դրամ:

գ) **լայն կիրառում ունեցող սննդային բույսերի** (շուշանբանջար՝ սոխուկավոր, սիբեխ՝ սովորական, սինդրիկ՝ հարթ, սինդրիկի բազմածաղիկ, շրեշ՝ փարթամ, ծնեբեկ՝ դեղատու, ծիսասամիթ՝ մանրապտուղ (բոխի), ավելուկ՝ գանգուր) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝	15 դրամ
արմատներ՝	50 դրամ.

**դ) այլ սննդային բույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝	10 դրամ
արմատներ՝	30 դրամ.

**ե) տեխնիկական բույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝	50 դրամ
արմատներ՝	150 դրամ.

**զ) գեղազարդային բույսերի** յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝

վերգետնյա մասեր՝	10 դրամ.
------------------	----------

**է) բուսական խեժերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝ 500 դրամ:

**(2-րդ կետը խմբ. 31.07.03 N 958-Ն, 19.01.06 N 46-Ն)**

3. Արդյունագործական նպատակով օգտագործվող պտուղների, հատապտուղների և ընկուզավորների յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

պտուղներ, հատապտուղներ՝	30 դրամ
տխիլ (տկողին), ընկուզ՝	60 դրամ:

**(3-րդ կետը խմբ. 19.01.06 N 46-Ն)**

4. Կենդանիների տեսակների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման համար՝

ա) կաթնասունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝

վայրի խոզ՝	50000 դրամ
գորշուկ (փորսուղ)՝	2500 դրամ
աղվես՝	500 դրամ
քարակզաքիս՝	2000 դրամ
ճահճակուղբ՝	500 դրամ
մշկամուկ՝	500 դրամ
նապաստակ՝	800 դրամ
սկյուռ՝	300 դրամ
քնամոլ՝	200 դրամ
խլուրդ՝	20 դրամ
այծյամ՝	85000 դրամ
եղեգնակատու՝	50000 դրամ
լուսան՝	50000 դրամ
ջրառնետ՝	10 դրամ.

բ) թռչունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝

սև ցին՝	10000 դրամ
ճահճային մկնաճուռակ՝	10000 դրամ
լորաճուռակ՝	5000 դրամ
մեծ ճուռակ՝	10000 դրամ
տափաստանային ճուռակ՝	10000 դրամ
թավշոտ ճուռակ՝	10000 դրամ
սովորական հողմավար բազե՝	5000 դրամ
արտուտաբազե՝	30000 դրամ
այլ (բացառությամբ Հայաստանի	5000 դրամ



Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների) բազեանմաններ՝ սազանմաններ (սուլող մրտիմն, կռնչան բադ, ճքճքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբադ, փումփուլավոր սուզաբադ)՝	500 դրամ
կաքավ՝	500 դրամ
լոր՝	100 դրամ
սև փարփար՝	300 դրամ
կռվակտցար, կարմրատտ կտցար, մորակտցար՝ աղավանմաններ (սովորական տատրակ, թխակապույտ աղավնի, անտառային աղավնի)՝	100 դրամ
կկվանմաններ՝	200 դրամ
սովորական այծկիթ՝	500 դրամ
սովորական կիվիվ՝	500 դրամ
մանգաղաթևեր՝	300 դրամ
ալկիոններ՝	300 դրամ
հոպոպ՝	100 դրամ
փայտփոր՝	300 դրամ
ճնճղուկանմաններ (տնային ճնճղուկ, սովորական սարյակ, սև կեռնեխ, սինակեռնեխ, դաշտային արտույտ, տափաստանային արտույտ)՝	100 դրամ
եղեգնահավ՝	500 դրամ
ոսկեգույն մեղվակեր՝	1500 դրամ.
զ) սողունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝	
գյուրգա՝	3000 դրամ
այլ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում 1000 դրամ գրանցված տեսակների) տեսակի օձեր՝	
կասպիական կրիա՝	200 դրամ.
դ) երկկենցաղների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար՝	
գորտեր (լճագորտ, փոքրասիական գորտ) (կգ)՝	70 դրամ
սովորական ծառագորտ (հատ)՝	200 դրամ
կանաչ դողոշ (հատ)՝	10 դրամ.
ե) փափկամարմինների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար՝	
անատամ (հատ)՝	20 դրամ
խաղողի խխունջ (կգ)՝	200 դրամ
այլ տեսակի փափկամարմիններ (կգ)՝	100 դրամ.
զ) հողվածոտանիների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար՝	
գետի խեցգետին (կգ)՝	50 դրամ
հաստապոչ կարիճ (հատ)՝	20 դրամ
այլ տեսակի հողվածոտանիներ (հատ)՝	10 դրամ.
	50 դրամ
է) ձկների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար՝	
սիգ՝	
լոքո՝	400 դրամ

սպիտակ ամուր, սև ամուր, հաստաճակատ՝	500 դրամ
կարմրախայտ՝	1000 դրամ
կարաս՝	20 դրամ
ծածան՝	100 դրամ
ցանկուն չնշված այլ ձկնատեսակներ՝	30 դրամ:

Օձի թույնի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը թույնի յուրաքանչյուր գրամի համար հաշվարկվում է օձի համապատասխան տեսակի համար սույն կետի «գ» ենթակետում ներկայացված դրույքաչափի նկատմամբ կիրառելով 3.0 գործակիցը:

Ձկնկիթի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը ձկնկիթի յուրաքանչյուր կիլոգրամի համար հաշվարկվում է սույն կետի «է» ենթակետում ներկայացված համապատասխան դրույքաչափերի նկատմամբ կիրառելով 10.0 գործակիցը:

**(4-րդ կետը խմբ. 31.07.03 N 958-Ն, 19.01.06 N 46-Ն, փոփ. 30.12.10 N 1729-Ն)**

4.1. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների տեսակների՝ արհեստական և բնական պայմաններում վերարտադրության (բացառությամբ գիտահետազոտական նպատակներով վերաբնակեցման) նպատակներով օգտագործման (հայթայթման) համար՝

ա) կաթնասունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
հարավային պայտաքիթ, Մեհելիի պայտաքիթ չղջիկ, Բլազիի պայտաքիթ, սովորական երկարաթև չղջիկ, արաքսյան գիշերաչղջիկ, հայկական գիշերաչղջիկ, Բեխշտեյնի գիշերաչղջիկ, ասիական լայնական չղջիկ, գորշ ականջեղ, ծալքաշուրթ լայնական չղջիկ	2500 դրամ
լայնական ջ ոզնի	2500 դրամ
Շելկովնիկովի կուտորա	2500 դրամ
պստիկ սպիտակատամ	2500 դրամ
հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ	7000 դրամ
Դալի ավազամուկ, հայկական մկնիկ, Շիդլովսկու դաշտամուկ, փոքր ճագարամուկ, փոքրասիական գետնասկյուռ	2500 դրամ
գորշ արջ	350000 դրամ
խայտաքիս	10000 դրամ
ջրասամույր	50000 դրամ
անտառակատու (ենթատեսակ՝ եվրոպական անտառակատու)	50000 դրամ
ընձառյուծ (ենթատեսակ՝ կովկասյան ընձառյուծ)	800000 դրամ
մանուլ	20000 դրամ
բեզոարյան այծ	500000 դրամ
հայկական մուֆլոն	600000 դրամ
բորենի	100000 դրամ
կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ	300000 դրամ
բ) թռչունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝	
ցախաքլորաորս	50000

	դրամ
գիշանգո	50000 դրամ
կարմիր ցին, սպիտակապոչ արծիվ, տափաստանային արծիվ, բլրային արծիվ, քարարծիվ, գաճաճ արծիվ, ջրարծիվ	25000 դրամ
բալոբան, սապսան	75000 դրամ
սպիտակագլուխ անգո, սև անգո	25000 դրամ
գառնանգո (մորուքավոր անգո)	50000 դրամ
օձակեր արծիվ, տափաստանային հողմավար բազե	7500 դրամ
տափաստանային մկնաճուռակ, մարգագետնային մկնաճուռակ, եվրոպական ճնճղաճուռակ	7000 դրամ
կարմրատոտ բազե, աղավնաբազե, միջերկրածովային բազե	5000 դրամ
փոքր ենթարծիվ, մեծ ենթարծիվ	2500 դրամ
անդրկովկասյան փասիան	5000 դրամ
թուրաջ	5000 դրամ
կտցար-կաչաղակ, ծովային քարադր, հաստակտուց քարադր, ճախրուկ, սպիտակապոչ եղտյուրիկ, մեծ իլիկակտցար, մեծ արորիկ, կրկնակտցար, ոտնացուպիկ, բզակտուց, մարգագետնային ծիծառակտցար, տափաստանային ծիծառակտցար, հայկական որոր որորակտուց ջրածիծառ, փոքր ջրածիծառ, սպիտակաայտ ջրածիծառ	2500 դրամ
	2000 դրամ
բվեճ	5000 դրամ
թավշատոտ բու	2500 դրամ
սևափոր դռլոն	2000 դրամ
մոխրաայտ սուզակ	2500 դրամ
վարդագույն հավալուսն, գանգրափետուր հավալուսն	20000 դրամ
մեծ ձկնկուլ, փոքր ձկնկուլ	7500 դրամ
սև արագիլ	7000 դրամ
տարգալակտուց	10000 դրամ
քաջահավ	7500 դրամ
սովորական ֆլամինգո	20000 դրամ
սպիտակագլուխ բադ կամ սավկա, մոխրագույն սագ, կարմրախածի սագ, ծվվան սագ, սպիտակաճակատ սագ, կարմիր բադ, խայտաբադ, սպիտակաաչք սուզաբադ, լայնակտուց բադ	5000 դրամ
թշան կարապ, ճչան կարապ, փոքր կարապ	20000

	դրամ
մարմարյա մրտինն	7000 դրամ
տուրպան	5000 դրամ
կովկասյան մարեհավ	5000 դրամ
անապատային կաքավ	5000 դրամ
վայրի հնդկահավ (ուլար)	12500 դրամ
մարգահավ, սուլթանական հավ	5000 դրամ
փոքր արոս, մեծ արոս	15000 դրամ
շիկապոչ քարաթռչնակ, սոխականման ճռիկահավ, հնդկական եղեգնաթռչնակ, կիսասպիտակավիզ ճանճորս, միջերկրածովային երաշտահավ	1500 դրամ
մեծ ժայռային սիտեղ	2000 դրամ
կարմրաթև մագլցող	2000 դրամ
ժայռային դրախտապան	2000 դրամ
խաչկտուց	1500 դրամ
իսպանական ճնճղուկ	1000 դրամ
մոխրագույն կռունկ, գեղանի կռունկ	15000 դրամ
կանաչ մեղվակեր	2500 դրամ
ներկարար	1500 դրամ
սև փայտփոր	2500 դրամ
դեղնագլուխ խաղտոնիկ	1500 դրամ
կարմրակատար շամփրուկ	1500 դրամ
ալպիական ճայ	2500 դրամ
սպիտակափող սոխակ	1500 դրամ
անապատային խածկտիկ	1500 դրամ
զ) սողունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար`	
անդրկովկասյան սահնօծ, կովկասյան կատված, պարսկական պսևդոցիկլոֆիս, Սատունինի սևագլուխ ռինխոկալամուս, Ղարևսկու իծ, հայկական լեռնատափաստանային իծ, հայկական իծ կամ Ռադդեի իծ	3000 դրամ
անդրկովկասյան տակիրային կլորագլուխ, Չեռնովի մերկաչք, առաջավորասիական մաբույա, երկարաոտ սցինկ, անդրկովկասյան բազմագույն մողեսիկ, անդրկովկասյան մողեսիկ, փոքրասիական մողես, մարգագետնային մողես, Դալի մողես, Ռոստոմբեկովի	1500 դրամ

մողես, սպիտակափոր մողես	
միջերկրածովային կրիա	2000 դրամ
դ) երկկենցաղների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար`	
փոքրասիական տրիտոն	1000 դրամ
սիրիական սխտորագորտ	1000 դրամ
ե) ձկների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար`	
հաշամ	2000 դրամ
իշխան	8000 դրամ
Սևանի բեղլու	2500 դրամ
Սևանի կողակ	2000 դրամ
հայկական կարմրակն	1500 դրամ
Քուռի քառթակ	1500 դրամ
առաջավորասիական ծական	1500 դրամ

**(4.1 կետը լրաց. 30.12.10 N 1729-Ն)**

5. Գյուղատնտեսական` խոտհնձի նպատակով անտառային ֆոնդի տարածքների յուրաքանչյուր հեկտարի միանվագ (միանգամյա) օգտագործման համար` 2000 դրամ:

**(5-րդ կետը խմբ. 31.07.03 N 958-Ն, 19.01.06 N 46-Ն)**

6. Գյուղատնտեսական` արածեցման նպատակով անտառային ֆոնդի տարածքների օգտագործման համար` անասունների յուրաքանչյուր գլխի համար` յուրաքանչյուր օրվա կտրվածքով (խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզեր, ձիեր)`

բարելավված արոտավայրերում` 3 դրամ  
բնական արոտավայրերում` 2 դրամ

**(6-րդ կետը խմբ. 31.07.03 N 958-Ն, 19.01.06 N 46-Ն)**

**(III-րդ բաժինը խմբ. 19.01.06 N 46-Ն)**

**IV. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարի հաստատագրված դրույքաչափերը**

Սույն բաժնով սահմանված հաստատագրված դրույքաչափերը կիրառվում են պինդ օգտակար հանածոների համար օրենքով սահմանված մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ:

1. Վառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Ածուխ	1200
Տորֆ	600
Այրվող թերթաքար	450

2. Երեսապատման քարերի, շինարարական քարերի, լցանյութի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Մարված պաշարից	Դրույքաչափը (դրամ)
----------------------------	----------------	--------------------

	Երեսապատման քարի, շինաքարի ելքը (տոկոս)	Երեսապատման քարը	շինաքարը	լցանյութը և բալաստային հումքը
Անդեզիտաբազալտ, անդեզիտ, բազալտ, հիալոբազալտ, դոլերիտային բազալտ, լիպարիտ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	750	300	90
	30-40	900	420	
	40-50	1050	480	
	50-ից ավելի	1200	600	
Գաբբրոներ, գրանիտներ, տուֆաավազաքարեր, մոնցոնիտներ, գրանոդիորիտներ, գրանոսիենիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	2100	-	120
	30-40	3000	-	
	40-50	3900	-	
	50-ից ավելի	4500	-	
Կոնգլոմերատներ, կոնգլոբրեկչիաներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	2400	-	-
	20-30	3000	-	
	30-40	3600	-	
	40-ից ավելի	4200	-	
Մարմարներ, մարմարացված կրաքարեր, դիաբազային պորֆիրիտներ, դիաբազներ, պորֆիրիտ-ներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	1800	-	900
	20-30	2400	-	
	30-40	3000	-	
	40-ից ավելի	3600	-	
Տուֆեր, կրաքար և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	600	210	60
	30-40	750	300	
	40-50	900	390	
	50-ից ավելի	1050	450	
Ֆելզիտային տուֆեր, տրավերտիններ, տուֆաբրեկչիաներ, չիդկվող տուֆաավազաքարեր և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	1350	450	60
	30-40	1500	600	
	40-50	1650	750	
	50-ից ավելի	1800	900	
Հրաբխային խարամ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	90
Պեմզաներ, պեռլիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	105
Ավազակոպչային, ավազակոպչազալաքարային խառնուրդներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	105

Սույն կետով սահմանված դրույքաչափերը կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով նախատեսված օգտակար ելքի չափերի՝ համապատասխան մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքին համապատասխանող մարված պաշարների ծավալների համար կիրառվում է սույն կետով նախատեսված համապատասխան ամենաբարձր հաստատագրված դրույքաչափը: Հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով լցանյութերի և բալաստային հումքի ելք նախատեսված չլինելու դեպքում դրան համապատասխանող մարված պաշարների ծավալների նկատմամբ կիրառվում է շինաքարի կամ երեսապատման քարի օգտակար ելքի չափին համապատասխան հաստատված հաստատագրված դրույքաչափը:

3. Շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը
----------------------------	-------------

	(դրամ)
Ցեմենտի հումք` - կավեր, կրաքարեր, տրավերտիններ - մագնեզիումասիլիկատային ապարներ	240 100
Կրաքար` կիր ստանալու համար	75
Կավեր	60
Պիպսատար կավեր	600
Բնական հանքային ներկեր	3000

4. Գունագեղ քարերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Վանակատ (օբսիդիան)	15
Լիստվենիտ	1500

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)	
	մենաքարը, երեսապատման քարը	լցանյութը, խճաքարը` որպես արհեստագործական քարերի հումք
Օնիքսանման մարմար	90	15

5. Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Չափի միավորը	Դրույքաչափը (դրամ)
Անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն)	տ	60
Բարիտ	տ	120
Բենտոնիտ	տ	1650
Դիատոմիտ	խոր. մ	750
Դոլոմիտ	տ	120
Դունիտ և պերիդոտիտ	տ	300
Մագնեզիումասիլիկատային ապարներ	տ	100
Կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս)	տ	1050
Հրակայուն կավեր	տ	150
Պեռլիտ	խոր. մ	1350
Ցեոլիտ	խոր. մ	1200
Հոկանյութեր	կգ	15

(Բաժինը լրաց. 31.03.05 N 445-Ն, խմբ. 19.01.06 N 46-Ն, լրաց. 22.01.09 N 123-Ն, խմբ. 29.12.11 N 1928-Ն)